ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<19>> մարտի 2020թ. N ԱՐ/84-2020

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՄՏՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N298-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պարետի 2020 թվականի մարտի 17-ի N2 որոշումը և 2020 թվականի մարտի 17-ի N3/6-2020 ցուցումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարածքում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համաճարակի կանխարգելման նպատակով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում մտցնել սահմանափակիչ միջոցառումներ՝ մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը ժամը 17:00-ն՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին (Հ. Հարությունյան), տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի պարտականությունները կատարողին (Գ. Գևորգյան) և կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատարին (Ս. Բուդաղյան)՝ իրականացնել մարզում տիրող իրավիճակի վերաբերյալ մշտադիտարկում և արդյունքների մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության մարզպետին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ*

Invalid signature

X

VERIFIED OCSP 3/19/2020 16:08:17 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2020 թվականի մարտի 19-ի
ՆՄՈ/84-2020 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում (այսուհետ՝ մարզում) սահմանափակիչ միջոցառումներ են 20 և ավելի անձանց մասնակցությամբ անցկացվող հետևյալ միջոցառումները՝

1) համերգները, ցուցահանդեսները, ցուցադրությունները, թատերական ներկայացումները և սպորտային, մշակութային, կրթական այլ միջոցառումները.

2) ժամանցային միջոցառումները.

3) տոնական և հիշատակի միջոցառումները, ներառյալ, բայց չսահմանափակվելով ծննդյան (տարեդարձի), հարսանյաց (նշանադրության), թաղման միջոցառումները,

4) պարետի ցուցումով որպես հանրային միջոցառում որակված այլ միջոցառումներ:

2. Հայաստանի Հանրապետության պարետի 2020 թվականի մարտի 17-ի ցուցումի համաձայն ապահովել՝

1) մարզի ամբողջ տարածքում հոգեհանգստի և/կամ հուղարկավորության արարողությունների վայրի և ժամի մասին տեղեկատվության ստացումը՝ տեղի ունեցող յուրաքանչյուր արարողության ժամանակ մեկ ներկայացուցիչ ոստիկանությունից և մեկ ներկայացուցիչ մարզի տեղական ինքնակառավարման մարմնից պատվիրակելու, հսկողություն սահմանելու նպատակով.

2) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության համապատասխան ստորաբաժանումից և մարզի տեղական ինքնակառավարման մարմնից մեկական անձի պատվիրակումը՝ 20 և ավելի անձանց մասնակցությամբ հանրային միջոցառումների արգելումը, հսկողությունն իրականացնելու նպատակով.

3) մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքներում Հայաստանի Հանրապետության պարետի 2020 թվականի մարտի 17-ի <<Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ>> N2 որոշման իրազեկումը:

Գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար՝ *Վ. Վարդազարյան*

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 19.03.2020 15:56:04 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217